

ԱՎԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻՔՉԱՆՅԱՆ
(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Հայ ժողովրդի արժանավոր դավակ Գևորգ Բագրատի ՂարիքՉանյանը ծնվել է 1920 թ. մայիսի 5-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի), Հեղափոխականի՝ Հայտնի կոմունիստ, Հասարակական-քաղաքական գործիչ Բագրատ ՂարիքՉանյանի ընտանիքում:



Իր կյանքի ու գործունեության ընթացքում Գ. ՂարիքՉանյանը փառավոր ուղի է անցել: Միջնակարգ կրթությունը սկսվել է ծննդավայրում և ավարտվել Երևանի Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցում: Այնուհետև ընդունվում է Երևանի պետական Համալսարանի պատմության ֆակուլտետը: Երբ սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, գերազանցիկ ուսանող, անվանական թոշակառու Հայրենասերը կամավոր մեկնում է ռազմաճակատ, անձնուրաց մարտնչում Ֆաշիզմի դեմ, իր սրբազան պարտքը կատարում Հայրենիքի հանդեպ: Հատկանշական է, որ պատերազմի գաշտում, իր ծննդյան օրը, 1942 թվականի մայիսին, Գևորգ ՂարիքՉանյանը ընդունվում է կոմունիստական կուսակցության շարքերը և մինչև կյանքի վերջը ակտիվորեն մասնակցում նրա գործունեությանը:

Մեծ Հայրենականի հաղթական ավարտից հետո Գ. ՂարիքՉանյանը շարունակում է ուսումը հարազատ Համալսարանում: Ավարտելով այն գերազանցության գիպլոմով, նա լիովին նվիրվում է իր սիրած մասնագիտությանը՝ պատմագիտությանը: Համալսարանի ասպիրանտուրան ավարտելուց հետո 1948 թվականին պաշտպանում է թեկնածուական, իսկ 1955 թվականին՝ դոկտորական ատենախոսությունը, որոնցում Համակողմանի ու գիտականորեն լուսարանված են Հայ ժողովրդի պատմության բարդ ու բախտորոշ ժամանակաշրջանի Հասարակական-քաղաքական պրոբլեմները:

Մեծ է Գևորգ ՂարիքՉանյանի գիտական վաստակը Հայագիտության, Հայ ժողովրդի պատմության ու մշակույթի, Հեղափոխական շարժումների, Հայ ականավոր գործիչների կյանքի ու գործունեության, ազգային-ազատագրական պայքարի հրատապ հարցերի բացահայտման և ուսումնասիրման ասպարեզում: Նրա գրչին են պատկանում 75 գիրք, ավելի քան 300 գիտական ու հրապարակախոսական հոդված Հայոց նոր և նորագույն շրջանի պատմության, Հայ ազգային-ազատագրական և Հեղափոխական շարժումների, Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության մասին: Վեր-

ըին տարիներին նա գրել ու հրատարակել է այնպիսի արժեքավոր աշխատություններ, ինչպիսիք են «Հայաստանը և Ռուսաստանը», «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը XIX դարի վերջին և XX դարի սկզբին», «Ավարայրից մինչև Սարդարապատ», «Ժողովրդական հերոս Անդրանիկ», «Էջեր Հայ ժողովրդի պատմությունից», «Ակնարկներ Հայ-բուլղարական բարեկամության պատմության», «Հայոց ցեղասպանությունը և համաշխարհային հանրությունը» և այլ մենագրություններ ու հրատարակումներ, որոնք տոգորված են պատմագիտական ու քաղաքագիտական խոր վերլուծությամբ ու ժամանակի ոգուն համապատասխան ընդհանրացումներով: Գևորգ Ղարիբջանյանի մի շարք աշխատություններ հրատարակվել են այլ լեզուներով, հանգամանք, որը նրան ճանաչում է բերել նաև աշխարհի տարբեր երկրներում:

Գևորգ Ղարիբջանյանը գիտության ակտիվ կազմակերպիչ էր և հմուտ մանկավարժ: Շուրջ կես դար նա Երևանի պետական համալսարանում և հանրապետության մյուս բուհերում դասավանդել է Հայոց պատմություն, վարել է հատուկ դասընթացներ, մեծ չափով օգնել երիտասարդ գիտական ու մանկավարժական կադրերի պատրաստման գործին: Գիտական ու մանկավարժական բեղմնավոր գործունեության համար նրան շնորհվել են պրոֆեսորի (1956 թ.), ՀՀ գիտության վաստակավոր գործչի (1968 թ.) կոչումներ, 1965 թվականին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1971 թվականին՝ իսկական անդամ:

Որպես հասարակական-քաղաքական ու պետական գործիչ Գևորգ Ղարիբջանյանը արժանավոր ներդրում ունի հանրապետության, հատկապես Գյումրիի սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացման գործում: Նա եղել է ՀԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար, 1954-1961 թթ. աշխատել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմում որպես պրոպագանդայի և արհմտցիայի, դիտություն, կուլտուրայի և ուսումնական հաստատությունների բաժինների վարիչի տեղակալ, դպրոցական բաժնի վարիչ: Ավելի քան յոթ տարի հանդիսացել է ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար, ինչը տարի՝ ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն: Հայրենական մեծ պատերազմում ցուցաբերած խիզախության և մարտական ու աշխատանքային ծառայությունների համար նա պարգևատրվել է 30 շքանշաններով ու մեդալներով:

Գևորգ Ղարիբջանյանի կյանքի ու ստեղծագործության միջով կարմիր թելի նման անցնում են Հայ ժողովրդին հուզող այնպիսի կենսական խնդիրների հիմնավորված լուծումների ուղիներ, ինչպիսիք են.

- Հայ ժողովրդի գոյատևման ու զարգացման հիմնահարցերը.
- Հայաստանի աշխարհաքաղաքական պայմանները և Հայ ժողովրդի դիրքորոշումը.
- Հայ ժողովրդի սեփական ուժերի վրա հենվելը.
- Հայ ժողովրդի ուղևորական կողմնորոշումը.
- մեր ազգային առանձնահատկություններին համապատասխան տնտեսաձևի ու նորովի սոցիալիզմի վերահաստատումը.
- Հայաստանը բարգավաճ ու հզոր երկիր դարձնելը:

Հայ ժողովրդի հարաաւան համար որպէս նշանաբան նա շեշտում էր Հայ մեծերից մեկի իմաստուն դարձվածքը, որը հնչում է այսպէս. «Բռունցքվելն է հավերժութիւնն Հայաստանի»: Դրա հետ միաժամանակ նա ընդդէմ էր այն ճշմարտութիւնը, որը պայմանավորված էր Հայաստանի աշխարհաքաղաքական պայմաններով: Դրա իմաստն այն է, որ Հայ ժողովուրդը ունեցել է և ունի մշտական, հուսալի բարեկամ: Դա ոուս մեծ ժողովուրդն է, Մեծ Ռուսիան է: Տարիներ առաջ, մեր դժնդակ ժամանակներում, երբ դարարդյան շարժման առնչութեամբ ստեղծվել էր Հայաստան ներխուժելու թուրքական վտանգ, նա հրապարակայնորեն ու վճռականորեն հայտարարեց. «Երբ ոուսական տանկերը Հայաստանում են, հայր կարող է հանդիստ լինել»: Նրա հեռատես խորհուրդը պահպանում է մեր ժողովուրդը: Հայաստանի սահմանները այսօր էլ Հայ զինվորների հետ պաշտպանում են ոուս զինվորները:

Գևորգ Ղարիբջանյանը կյանքից հեռացավ, երբ հաշված ամիսներ էին մնացել ծննդյան 80 ամյակին: Նրա հայրենանվեր գործը, սլայծառ անունը միշտ վառ կմնա Հայ ժողովրդի հիշողութեան մեջ:

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ